**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 11.01.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)**
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
**գնահատող հանձնաժողովի անդամներ՝**
- ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
- ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱՏԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,
**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ-ի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:**

**1. Մասնակիցների՝ ԷԱՃ-ի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ-ի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Ա. Բաղրամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում հրավերով պահանջվող որակավորման պահանջներին առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- **«Գարանտսերվիս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ 18, 20, 21, 22, 24, 26, 28, 32 և 33-րդ չափաբաժինների մասով հանձման–ընդունման արձանագրությունների և հաշիվ ապրանքագրերի պատճեները կցված չեն:
- **«Մ ԲԻ Ռ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ 2, 3, 9, 10, 11, 12, 13, 15 և 29-րդ չափաբաժինների մասով հանձման–ընդունման արձանագրությունների և հաշիվ ապրանքագրերի պատճեները կցված չեն:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 14.11.18թ. հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:**

**16.01.19թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**

1.3 Սահմանված ժամկետում **«Գարանտսերվիս» ՍՊԸ**-ի և **«Մ ԲԻ Ռ» ՍՊԸ**-ի կոմից շտկվել են վերոնշված անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ 1, 2, 3, 9, 10, 11, 12, 13, 15 և 29-րդ չափաբաժինների մասով **«Մ ԲԻ Ռ» ՍՊԸ**-ին, 4, 5, 6, 7, 8 և 9-րդ չափաբաժինների մասով **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ին, 14, 16, 18, 20, 21, 22, 24, 26, 28, 32 և 33-րդ չափաբաժինների մասով **«Գարանտսերվիս» ՍՊԸ**-ին, 17, 19, 23, 25, 27, 30, 31 և 34-րդ չափաբաժինների մասով **«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ**-ին և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Հ. Կարապետյան |
| Գնահատող | Ս. Պետրոսյան |
| Գնահատող | Դ. Սերոբյան |
| Գնահատող | Ա. Սիմոնյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Բաղրամյան |